ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-11-Ը ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Վաչե Տերտերյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Ստրասբուրգ) / 2019թ. դեկտեմբերի 9-11-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ԵԽ ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցել Ժողովրդավարության և կառավարման եվրոպական կոմիտեի (ԺԿԵԿ) 10-րդ նիստին (այսուհետ՝ Նիստ):

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Նիստի բացման և ողջույնի խոսքով հանդես եկավ ԵԽ ժողովրդավարության և կառավարման եվրոպական կոմիտեի նախագահ Փիթեր Անդրեն, որից հետո Ժողովրդավարության գլխավոր տնօրինության մարդկային արժանապատվության, հավասարության և կառավարման գծով տնօրեն Կլաուդիա Լուչիանին ներկայացրեց ԺԿԵԿ - ի վերջին լիագումար նիստից հետո տեղի ունեցած հիմնական զարգացումները: Այնուհետև անդամ երկրները փոխանակվեցին իրենց երկրներում տեղական ժողովրդավարության և կառավարման ոլորտներում իրականացվող բարեփոխումների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությամբ: Այս համատեքստում հանդես եկա Հայաստանում տեղական ինքնակառավարման բարեփոխումների վերաբերյալ մանրամասն ներկայացմամբ և ելույթով. 2 ներկայացումն էլ հասանելի են ԵԽ պաշտոնական կայքէջում՝ https://www.coe.int/en/web/good-governance/presentations-and-speeches-10th-cddg և զետեղվել են Նիստի ընդլայնված արձանագրության մեջ:
   Անդամ երկրների պատվիրակները ներկայացրեցին իրենց տեսակետները ժողովրդավարական կառավարման խթանման վերաբերյալ, այս ոլորտում առկա ձեռքբերումները, մարտահրավերները, խոչընդոտները:
   ԵԽ գլխավոր քարտուղարի տեղակալ տիկին Գաբրիելլա Բատանի-Դրագոնին ԺԿԵԿ-ին առաջարկեց շարունակել գլխավորել ԵԽ միջկառավարական աշխատանքները ժողովրդավարական ինստիտուտների, հանրային

կառավարման, ապակենտրոնացման և պատշաճ կառավարման ուժեղացման ուղղություններով՝ հատկապես շեշտը դնելով որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների մասնակցության և հանրային էթիկայի խթանմանն ուղղված աշխատանքներին:
ԵԽ տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի (այսուհետ՝ Կոնգրես) հետ համագործակցությանն անդրադարձավ Կոնգրեսի գլխավոր քարտուղար Անդրեաս Կիֆերը՝ մասնավորապես մասնակիցների ուշադրությունը հրավիրելով թափանցիկությանը, հանրային էթիկային և տեղական գործընթացներին քաղաքացիների մասնակցությանն առնչվող մի շարք հրապարակումների վրա՝ հորդորելով հասարակության առավել լայն շերտերին հասանելի դարձնելու նպատակով տարբերակներ գտնել դրանք ավելի շատ լեզուներով ունենալու համար:
ԺԿԵԿ քարտուղարությունը ներկայացրեց նախարարների տեղակալների կողմից հաստատված 2020-2021թթ. աշխատանքների ընդհանուր նկարագիրը և հատուկ խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքային ծրագիրը: Քարտուղարությունը տեղեկացրեց նաև, որ հաջորդ 2 տարվա անելիքներից կոնկրետ աշխատանքներ արդեն սկսված են, մասնավորապես այն մասով, ինչը վերաբերում է ժողովրդավարության և կառավարման վրա արդի թվային փոխակերպման ազդեցությանը, ինչպես նաև ընտրական գործընթացներում նոր տեխնոլոգիաների կիրառմանը:
ԵԽ պատշաճ կառավարման փորձագիտական կենտրոնի ղեկավար Ալինա Տատարենկոն էլ ներկայացրեց կենտրոնի կողմից 2019թ. ընթացքում ԵԽ անդամ 19 պետությունների տրամադրված փորձագիտական աջակցության մասին:

7. <u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>

Ստրասբուրգ այցի ընթացքում հանդիպում եմ ունեցել Կոնգրեսի գլխավոր քարտուղար Անդրեաս Կիֆերի հետ: Հանդիպմանը ներկա էին նաև Մոնիտորինգի հանձնաժողովի քարտուղար Ստեֆանի Պուարելը, Կանոնադրական գործունեության ղեկավար Ռենատե Զիկմունդը և Համագործակցության և արտաքին հարաբերությունների ղեկավար Դմիտրի Մարչենկովը:
Հանդիպում եմ ունեցել նաև Մարդու արժանապատվության, հավասարության և կառավարման հարցերով տնօրեն Կլաուդիա Լուչիանիի հետ:
2 հանդիպումների ընթացքում էլ մանրամասն անդրադարձ է կատարվել 2019թ. մայիսի 13-14-ը Կոնգրեսի պատվիրակության՝ Հայաստան կատարած մոնիտորինգային այցի արդյունքներով զեկույցի նախնական նախագծին, որի վերաբերյալ հայտնել եմ մի շարք դիտարկումներ և տեսակետներ:
Ներկայացրել եմ նաև Հայաստանում վարչատարածքային բարեփոխումների ընթացքը և ընդհանրապես տեղական ժողովրդավարության ոլորտում առկա զարգացումները:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Նիստի ընթացքում ԺԿԵԿ-ը անդրադարձավ Նախարարների կոմիտեում Ֆրանսիայի նախագահության ընթացքում (2019թ. մայիսի 17 – 2019թ. նոյեմբերի 27) կատարված աշխատանքներին, ինչպես նաև հաջորդող՝ Վրաստանի նախագահության (2019թ. նոյեմբերի – 2020թ. մայիս) կողմից սահմանված առաջնահերթություններին: ԺԿԵԿ – ի կողմից ընտրվեցին նաև բյուրոյի նախագահ և նախագահի տեղակալ 1 տարի ժամկետով և բյուրոյի անդամներ 2 տարի ժամկետով:

Նիստի ավարտին ԺԿԵԿ-ը հաստատեց նաև Նիստի ընդլայնված արձանագրությունը:

Որոշում կայացվեց հաջորդ նիստը գումարել 2020թ. ապրիլի 27-28-ին:

9. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.**

16 դեկտեմբերի 2019թ.